

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի համար

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԲՆԱԿ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մանուկ Արեգյանի անվան Գրականության ինստիտուտը պատրաստում է «Հայ գրականության պատմության» միջնակարգ դպրոցի դասագրքի նոր, վերամշակված ու խմբագրված հրատարակությունը:

Շատ կարևոր ու անհետաձգելի աշխատանք է այդ, կապված ՀԿ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշման կենսագործման հետ՝ Հայաստանի պարտիական կազմակերպություններում իդեոլոգիական աշխատանքը ուժեղացնելու մասին:

«ՍՍՌԻՄ պատմության» դասագրքի կոնսպեկտի մասին արած իրենց գիտողություններում ընկեր Ստալինը, ընկ. ընկ. Ժգանովը և Կիրովը գրում էին:

«Պետք է հաշվի առնվի, որ խոսքը վերաբերվում է դասագրքի ստեղծման, որի մեջ պետք է կշռադատված լինի յուրաքանչյուր բառ և յուրաքանչյուր բնորոշում և ոչ թե ժուռնալային անպատասխանատու հոդվածների, որտեղ կարելի է ամեն ինչի մասին ուղածի պես շաղակրատել, հեռու մնալով պատասխանատվության զգացմունքից»:

1940—1941 թվերին հրատարակված դասագրքի երեք պրակները հեռու են այս պահանջները բավարարելուց և իրենց մեթոդո-

լոգիական, գաղափարական սխալներով, պատմական դեպքերի ու դեմքերի ոչ ճիշտ գնահատումով, այժմ բոլորովին չեն կարող բավարարել սովետական դպրոցի աճող պահանջներին:

Մեր այս հոդվածի մեջ քննության ենթադրվում է «Հայ գրականության» պատմության գիրքը:

Մեր քննարկման ենթակա գիրքը բաժանված է երկու մասի: Առաջին մասում խոսվում է 19-րդ դարի 50—60-ական թվականներին գրողների մասին (Մ. Նալբանդյան, Ռ. Փականյան, Ս. Շահազիզ, Գ. Դոդոխյան, Գ. Ալիշան, Մ. Պելեկանյան, Պ. Դուրյան, Պոռչյան, Ղ. Աղայան), երկրորդ բաժնում՝ 19-րդ դարի 70—90-ական թվականների գրողների մասին (Գ. Սունդուկյան, Հ. Պարսյան, Մերենց, Բաֆֆի, Մուրադյան, Երվանդազ, Նար. Դոս, Ա. Արփիարյան, Մ. Ահմեդյան, Հ. Հովհաննիսյան, Ալ. Մատուրյան, Զիվանի):

Սրկու բաժիններին էլ կցված են լամպայատախան ներածություններ, որոնց մեջ խոսվում է տվյալ ժամանակաշրջանի աղետալիտետական, քաղաքական կյանքի մասին:

Հասկանալի է, որ ներածությունները ոչ միայն կազմում են դասագրքի օրգանական մասը, այլև հանդիսանում են հիմնական ուղեցույցը, մի տեսակ բանալի՝ դասագիրքը օգտագործողների համար, ուստի մենք ցանկանում ենք ամենից առաջ քննության առնել այդ ներածությունները:

Սովետական պատմությանից և գրականագետից պահանջվում է անցյալը ներկայացնել այնպես, ինչպես այդ եղել է, ոչ զեղեցկացնել, ոչ տգեղացնել, ցույց տալ դասակարգային հակամարտությունները, բախումները, ցույց տալ այն օրնաական պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը շահագործողների դեմ, և դրա արտացոլումն է գտել տվյալ ժամանակա-

1 Դասագիրքը խմբագրել են՝ պրոֆ. Հ. Մելիքյանը և ընկ. Խորեն Սարգսյանը: «Հայ գրականություն» 19-րդ դարի 50—60-ական թվականներին» բաժինը գրել է ընկ. Խ. Սարգսյանը, ընկ. Հրայր Մուրադյանի աշխատակցությամբ, «Հայ գրականություն» 19-րդ դարի 70—90-ական թվականներին» բաժինը գրել է բանասիրական գիտությունների թեկնածու ընկ. Սուրեն Հարությունյանը:

2 Պատմական գիտությունների ֆրոնտում, Սրեն, 1938 թ., էջ 13:

շրջանի գաղափարախոսության, հատկապես պեղարվիստական գրականության ու հրապարակախոսության մեջ:

Միաժամանակ այդ ներածությունները պետք է ցույց տան տվյալ պատմաշրջանի գաղափարախոսության մեջ նորը, առաջադիմականը, որը մասսաներին ղեկի ապագան է առաջնորդում, շանտեսելով հակադիր կողմը՝ սեակցիոն գաղափարախոսությունը, որի նպատակն էր հայ ժողովրդին պահել իր ստրկական վիճակում՝ գերի ներքին և արտաքին հարստահարողների լկյ խոսքով՝ պրականագետի առաջին պարտականությունն է անցյալի պրականության մասին խոսելիս առաջնորդել շուրթանշուր ազգային կուլտուրայի մեջ երկու կուլտուրա՝ առաջադիմական և պահպանողական կուլտուրա տեսնելու յենինյան հայտնի դրույթով:

Դժբախտաբար մեր քննարկած դասագրքում զետեղված երկու ներածություններն էլ չեն կարողացել այդ պահանջը բավարարել: Ուրի ներածություններն իրենց սխեմատիկ, մակերեսային ընդլայնումով, պատմական փաստերի աղավաղումով, կարող են միայն զժվարացնել դասագիրքը օգտագործողների աշխատանքը:

Առաջին ներածությունը, որը լույս է հասնում 13 էջերը, խոսում է 50—60-ական թվականների հայ իրականության ողորդողական վիճակի մասին: Ուրի 13 էջերից 11-ը հատկացված է արեւելահայ կյանքին: Թվում է, թե ներածության հեղինակ ընկ. Մարգարյանը բավականաչափ հնարավորություն տեսնել է մոտ մեկ մամուլանոց հատվածում, ինչ որ հանուր գծերով, ներկայացնել լեզրակովկասի տնտեսական, հասարակական, բարոյական կյանքը՝ 50—60-ական թվականներին: Սակայն զարմանալի կերպով դրանք չեն ներառվում հեղինակին: Նա այդ բոլորի մասին խոսել է հազիվ մի էջում, ընդհանուր, գրեթե վերնագրային մի քանի ֆրազներով, նվիրված չղափարմիջում երևան եկող կապիտալիզմական զարգացման առաջին սաղմերին, ֆեոդալական կարգերի կամաց կամաց տեղի տալուն: Մնացած 8 էջերում խոսվում է աշխարհաբարի ու գրարարի պայքարի մասին, առանց առկա հույսերի հակամարտ գաղափարախոսությունների ու այդ գաղափարախոսություններն արտահայտող հասարակական հոսանքների, պրական ուղղությունների հետ:

Էլ ավելի անհաջող է գրված 50—60-ական թվականների արեւմտահայ կյանքի մասին: Ներածության այդ հատվածը բաղկացած է 60 տողից և պարունակում է իր տողերի քանակից ավելի սխալներ, անճշտություններ, աղավաղումներ:

Մեր ակնարկած հատվածը վերնադրված է

«Ազգային ազատագրական շարժումները և քաղաքական հոսանքները թուրքահայերի մեջ»:

Հենց սկզբից ասենք, որ ընթացած վերնագրին, այդ հատվածում ոչ մի նախադասություն չկա ազգային ազատագրական շարժումների մասին:

Քննության առնենք նախադասություն առ նախադասություն:

«50—60-ական թվականները կուլտուրական-քաղաքական բեկման տարիներ էին ոչ միայն ռուսահայերի, այլև թուրքահայերի համար: Ուր տարիներին կուլտուրական առաջնությունը Զմյուռնիայից արդեն անցել էր Պոլս, ուր վաղուց կար մեծ թվով հայություն»:

Պատմական իրողությունն այն է, որ իզմիրը, ինչպես էլ որպես ծովեզրյա առևտրաշահ քաղաք, դարձել էր բուրժուազիայի համար գործունեության կենտրոն ու հենց այդ հանգամանքի շնորհիվ այնտեղ ղեկավարող իզմիրի սկզբներից զարգացել է մամուլը, թատրոնը, և այլն, երբեք չի կարողացել մտավոր իր կյանքով գերազանցել Պոլսին, որտեղ կենտրոնացված էր ամբողջ արեւմտահայ միտքը վաղ ժամանակներից:

19-րդ դարի կեսերին, երբ ղեկ իզմիրում նոր-նոր հիմնադրվում էին ընկերություններ, բացվում առաջին մեկ-երկու դպրոցները, Պոլսն արդեն կուլտուրական աշխույժ կենտրոն էր, ուներ մոտ 41 դպրոց, մի շարք տպարաններ, հասարակական կրթական ընկերություններ և այլն:

Իզմիրի՝ այսպես կոչված հրատարակչական այդ շրջանը, որի մասին շատ է խոսվել նաև բուրժուական բանասերների ու պատմաբանների կողմից, աչքի է ընկնում գերազանցապես դավանաբանական, ազդեցիկ ընդլայնումով: Ուր թվերին այնտեղ եղել է միայն ամերիկացի «Ինդիանա» կրթֆիլմի տպարանը, որը բերվել էր Մալթայից, և 1930-ական թվականների վերջերից մինչև 50-ական թվականները գործել է, լույս ընծայելով բացառապես միսիոնարական, կրոնական ազդեցիկ գրքեր, բողոքական թարգմանված անգլերենից («Առաջնորդ փրկության», «Ապացույց բրիտանական հավատո», «Մարիամի պատմությունը» և այլն),² որոնք ոչնչով չէին խթանում հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական պայքարին:

1 «Հայ գրականության պատմություն», Բ. Գիրք, էջ 14: Բոլոր ընդգծումները մերն են — Գ. Սուր.

2 Տե՛ս Բ. Զարպանալյանի «Հայկական մատենագրություն» համապատասխան էջերը: Թեոդիկի «Տիպ ու տառ» աշխատությունը և Գ. Լեոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» գործի 192-րդ էջը:

Առհասարակ շատ է գերազանահատված միսիոներական հիշյալ հրատարակությունների դերը նաև աշխարհաբարի ձևավորման գործում։ Աշխարհաբար լեզուն թե արևելահայերի և թե արևմտահայերի մոտ ստեղծվել է աշխարհիկ հայ գրականության առաջացման, հասարակական կյանքի զարգացմանը ղուգրնթաց. այն արդյունք չէ օտարամոծության, հայ ժողովրդին խորթ դավանաբանական դրականության։

Մինչդեռ իզմիրում այս կարգի թարգմանական բրոշյուրներ էին լույս տեսնում և «Արշալույս Արարատյանը» միակ բացառությունն էր, Կ. Պոլսում տպագրվում էին աշխարհիկ բովանդակությամբ, հասարակական խոշոր նշանակություն ունեցող գործերը, օրինակ՝ Նիկ. Զորայանի, Գ. Օսոյանի, Ն. Ռուսինյանի գործերը՝ տնտեսագիտության, մանկավարժության, աշխարհաբար լեզվի, և այլ հուզող հարցերի մասին, և վերջապես այնտեղ լույս էին տեսնում աշխարհաբար առաջին ինքնուրույն երկերը, ինչպես Մ. Հիսարյանի «Խոսքով և Մարրուհի» վեպը (1851)։

Նույնիսկ 60—70-ական թվերին իզմիրում զարգացած գրականությունը, եթե նկատի չունենանք մեկ-երկու բացառություն («Մե լեռին մարդը», «Մեթոդի վրա» գրքերը, «Մադիկ» և «Արևելյան մամուլ» պարբերականները և այլն), հիմնականում հեռու է եղել բուն հայ ժողովրդին հուզող հարցերը հրահրելուց։ Տեսնյան եղբայրների տպարանից դուրս եկած թարգմանական գրքերը ավելի շատ նպաստել են երիտասարդության մեջ ընթերցասիրություն տարածելու գործին, քան հայ ժողովրդի գաղափարական պայքարին, քաղաքական շահերին։ Այլ. Դյումայի, Ժյուլ Վերնի, Էռեն Մյուրի, նույնիսկ Վ. Հյուգոյի գործերը քիչ քան կարող էին ասել մանավանդ այդ շրջանի ազգային ազատագրական գաղափարներով տոգորված հայ երիտասարդությանը։

40—50-ական թվականների իզմիրի հրատարակություններին առաջնություն տալը ուղղակի կամ անուղղակի կերպով արևմտահայ մտքի զարգացումը բուն ներքին սոցիալ-տնտեսական հարաբերություններից կտրելով, օտար, եկվոր կուլտուրայով բացատրելու ռիսաթեզին է հանգում։

Դասագրքի այդ հատվածի հաջորդ պարբերությունը հետևյալն է. «Պոլսի հայ բնակչությունը բաղկացած էր երկու հիմնական դասից՝ ամիրաներ և էսնաֆ։ Ամիրաների դասը կազմում էին խոշոր վաճառականները, կապալառուները, սարաֆները, բարձրաստիճան պաշտոնյաները և այլն։ Էսնաֆը կազմված էր արհեստավորներից, մանր ծառայողներից, մշակներից և այլն։ 19-րդ դարի 40—60-ական

թվականները նշանավոր են սոցիալական այդ երկու խմբավորումների սուր բախումներով»¹։

Ի դեպ ամբողջ դասագրքի ներածություններում այս միակ հատվածի մեջ է, որ խոսվում է արևմտահայ հասարակական քաղաքական կյանքի, դասակարգային փոխհարաբերությունների մասին։ Դժբախտաբար այդ տողերը որոշակի գաղափար չեն կարող տալ դասակարգային այն ուժեղ բախումների մասին, որ տեղի էին ունենում մի կողմից իր դարն ապրած ֆեոդալական հարաբերությունների, մյուս կողմից կապիտալիստական հարաբերությունների միջև։

Նախ՝ ինչու և այստեղ չի տրվում սոցիալական այդ երկու խմբավորումների դասակարգային գնահատումը, ինչու և չի ասվում, օրինակ, թե ամիրայությունը ուր դասակարգին էր պատկանում, էսնաֆությունը ո՞ր։

Ովքե՛ր էին ամիրաները։ Հայտնի է, որ ամիրայությունը Թյուրքիայում մի քանի գար դրսևորել է իրեն որպես հայ խոշոր կալվածատերերի, ազնվականների մի դաս։ Ազնվականներ, որոնք մինչև 19-րդ դարի սկզբները պահել են իրենց ազնվական, ֆեոդալական արտոնությունները։ Թյուրքական կառավարությունը նրանց ճանաչել է որպես խոշոր կալվածատերեր և նրանց տվել է մի շարք առանձնաշնորհումներ, որից զուրկ էին կիսաճորտական վիճակում գտնվող հայ ժողովրդի մյուս խավերը։ Ամիրաները իրավունք ունեին թամբած ձի նստելու, հատուկ տարազ ունենալու, սահմանված ձևի մուճակներ հագնելու, համրիչներ գործածելու և այլն։ Թյուրքական կառավարությունը այդ ամիրայական, ֆեոդալական տների միջոցով է, որ կեղծքում, շահագործում էր գավառի հայությունը, կապալով ամիրաներին հանձնելով ամբողջ հարկերի գանձումը։

Առևտրական կապիտալի Թյուրքիա թափանցումով ամիրայությունը արագ կերպով իր տեղը զիջեց երիտասարդ բուրժուազիային։ 19-րդ դարի սկզբներից ամիրայական շատ տներ հարկադրված եղան թողնել գավառը և հաստատվել օսմանյան մայրաքաղաքում, բզրազվել գերազանցապես ֆինանսական գործարքներով, կատարելով պալատական ծառայություններ²։

19-րդ դարի կեսերին, հանձին ամիրանե-

¹ «Հայ գրականության պատմություն», Բ. գիրք, էջ 14։

² Թյուրքական սուլթանների վառողապետի, չանձապետի, ճարտարապետի պաշտոնները իրկար ժամանակ կատարել են մի շարք ամիրայական տներ՝ Տառյաններ, Տյուզլյաններ, Պալյաններ և այլն։

րի որդիների մենք տեսնում ենք արդեն ոչ թե ֆեոդալական գաղափարախոսություն, այլ բուրժուական գաղափարախոսության կրողների, տեսնում ենք ամիրաների բուրժուականացած սերնդին:

Մյուս կողմից, հայտնի է, որ Լսնաֆությունը (համբարությունը) Կ. Պոլսում աշխուժացել էր հատկապես 19-րդ դարի առաջին կեսերին և արտահայտում էր ժողովրդական լայն շերտերի շահերը: Առևտրական կապիտալի պարզացմանը զուգընթաց քաղաքային արհեստավորությունն էլ 19-րդ դարի կեսերին ճշտում է իր գիրքերը: Արհեստավորության որոշ շերտեր, օրինակ, հարուստ ոսկերիչների համբարությունը, կուտակելով մեծ դրամագույն, սկսում են զբաղվել նույնպիսի գործարքներով, ինչպես սառաֆ ամիրաները, այլ խոսքով՝ նույնպես բռնում են բուրժուականացման ուղին, իսկ մյուս մասը, անշուշտ, ճնշող մեծամասնությունը, ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի գեմոկրատական դիրքերը:

Սեփրոպայի գեմոկրատական շարժումները 40-ական թվականներին, մասնավորապես Ֆրանսիայի 48 թվականի ուղուցիան, որոշ ազդեցություն ունեցան Լսնաֆական շարժման վրա: Այդ ազդեցության տարածողներն այն երիտասարդներն էին, որոնք իրենց քարձրագույն կրթությունն ստացել էին Սեփրոպայի կուլտուրական կենտրոններում:

Հինգ տողից բաղկացած այս հատվածը պարունակում է մի քանի անորոշություն: Եթե նկատի չունենանք առաջին նախադասության ոճական, լեզվական անհարթ ձևակերպումը, ապա պետք է անորոշ համարել նույն այդ Սեփրոպայի գեմոկրատական շարժումները 40-ական թվականներին՝ արտահայտությունը, որը ոչինչ չի ասում և շարունակության մեջ էլ միայն հիշվում է ֆրանսիական «48 թ. ուղուցիան», առանց պեթ մի քառով բնութագրելու այն: Չի բացահայտված նաև այդ շարժումների ազդեցությունը՝ Լսնաֆական շարժման վրա: Լսնաֆական որ շարժման մասին է խոսքը, երբ է տեղի ունեցել, ո՞ր թվին, ինչ հետևանքներ է ունեցել: Եվ վերջապես՝ այդ Լսնաֆական շարժման վրա ազդեցություն գործողները Սեփրոպայի ո՞ր «կուլտուրական կենտրոններում» է, որ սովորել են:

Իսասագրքի հաջորդ հատվածում հեղինակը գրում է, թե առևտրահայ գործիչներից շատերը՝ Ն. Ռուսինյան, Միրենց, Ստեփան Ռսկան և ուրիշները սովորել են Փարիզում, ականատես

են եղել ֆրանսիական «48 թ. դեպքերին» և տոգորված բուրժուական, գեմոկրատական գաղափարներով, վերադարձել են հայրենիք, «որտեղ նրանց սպասում էր տեղում աճած երիտասարդության մի ամբողջ պլեադա» (Բ. Ուսյան և ուրիշներ):

Այնուհետև ասվում է, թե «40-ական թվականներին նրանց ջանքերով ազգային կուլտուրական գործերի կառավարման ընագավառում հաղթանակեց ընտրական սկզբունքը»:

Բայց ինչպե՞ս է պատահել, որ 1850-ական թվականներին Պոլիս վերադարձած սերունդը 40-ական թվականներին այդպիսի գործունեություն է ծավալել: Գուցե վրիպակ է: Բայց ահա շարունակությունը:

«Իսկ 50-ական թվականներին, շնորհիվ նրանց եռանդուն գործունեության, մշակվեց ու 1860 թվի մայիսից սկսեց գործադրվել այսպես կոչված Ազգային Սահմանադրությունը»¹ Շարունակությունն ավելի մեծ թյուրիմացություն է:

«Ազգային սահմանադրությունը Ստոտմալյան կայսրության Բրիտոնյա մոդովուրդների աւտոնոմիայունների մասին, հռչակվեց սուլթանի 1856 թվականի փետրվարի 18-ի հրովարտակով (Թանզիմատ)»²:

Նախ՝ պատմական փաստերի անտեղյակություն է, թե Ազգային սահմանադրությունը Ստոտմալյան կայսրության Բրիտոնյա մոդովուրդների աւտոնոմիայունների մասին էր: Հայտնի է, որ Ազգային սահմանադրությունը գուտ հայկական երևույթ էր և մշակված քաղաքական թյուրբահայերի համար: Երկրորդ՝ ինչ պետք է հասկանա դասագիրքի օգտագործողը՝ վերջիվերջո այդ «Ստոտմալյան կայսրությունից» ինչու՞ չգործածել ընդունված, բոլորի կողմից հասկանալի սոսմանյան կայսրություն՝ արտահայտությունը:

Այնուհետև՝ «Ազգային սահմանադրությունը» սահմանադրություն չէր բառիս իսկական իմաստով, բայց նա որոշ չափով սահմանափակում էր պատրիարքի իշխանությունը. համեմալյն դեպս, որոշ ժամանակի ընթացքում իթանեց թյուրբահայերի ազգային ինքնագիտակցության արթնացմանը:

«Սահմանադրության» առավելությունը երբեք էլ այն չէր, որ սահմանափակեց պատրիարքի իշխանությունը: Պատրիարքարանը՝ լինելով հանդերձ հայ ֆեոդալական գաղափարախոսության ամբողջ, վարելով պահպանողա-

¹ Նույն տեղում, էջ 15:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

¹ «Հայ գրականության պատմություն», Բ. Կիրք, էջ 14:

կան գիծ, այնուամենայնիվ միակ հիմնարկն էր, որ կարողանում էր կապ ստեղծել պետականությունից գուրկ հայության միջև, Գրապահանջները ներկայացնել տիրապետող կառավարությանը, նույնիսկ դիվանագիտական աշխարհը հանձին պատրիարքարանի ճանաչում էր Քյուրթիայի հպատակ հայ ժողովրդին:

«Սահմանադրության» առավելությունն այն էր, որ պատրիարքարանի մինչ այդ վայելած արտոնություններն ու իրավունքները խլելով, դրանք հանձնեց ընտրովի մի մարմնի՝ Ազգային ժողովի իրավասությանը, իսկ այդ ժողովում արդեն գերակշռությունը պատկանում էր հայ բուրժուազիային և բավականաչափ իրեն զգացնել էր տալիս նաև պոլսահայ դեմոկրատիան:

Բայց կա նաև «Սահմանադրության» նշանակության մի այլ կողմը, որի վրա առհասարակ ուշադրություն չի դարձվել:

Քյուրթիայի սուրբեր թաղաքներից ու գավառներից ընտրված 140 դեպուտատով այդ Ազգային ժողովի գործունեությունը՝ եվրոպական, այսպես կոչված, «սահմանադրական» բուրժուական կառավարությունների պետական մեխանիզմի օրինակով, այն էլ այնպիսի մի երկրի մայրաքաղաքում, որը ինքը շուներ ընտրական սխտեմով գործող որևէ պետական մարմին, հետապնդում էր շատ որոշակի թաղաքական նպատակներ:

Ազգային ժողովի գործունեությամբ հայ բուրժուազիան ըստ իր իրավունքների նախապատրաստում, մարզում էր այն պետական ապարատը, որը ինքնավարություն ձեռք բերելուց հետո, պետք է իր ձեռքը վերցնեի կառավարությունը և ղեկավարեր երկիրը:

Ազգային «Սահմանադրությունը» և դրա հիման վրա գործող Ազգային ժողովը, հսկայական դեր կատարեցին Համիդյան բռնապետության ամբողջ 30-ամյակի ընթացքում: Հայտնի է, որ Սուլթան Համիդը ամենադաժան հալածանքներ էր սկսել պարբերական մամուլի ու գրականության դեմ, արգելված էր թերթերում, շրջերում հայ ժողովրդի թաղաքական պահանջներին վերաբերող որևէ բանի տպագրությունը, արգելված էին նույնիսկ ազատություն, Հայաստան և այլ այս. կարգի բառերի գործածությունը:

Հասարակական վայրերում վխտում էին լրտեսները: Գաղափար կատարվում էին անընկալազրելի ճնշումներ ու հալածանքներ, որոնց հրապարակումը, տարածումը պատժվում էր արսորով:

Ահա այսպիսի ծանր, մղձավանջային պայմաններում գումարվող Ազգային ժողովը միակ հիմնարկն էր, որտեղ ազգային երեսփոխանները 4—6

խանները, որոնք ներկայացնում էին տարբեր թաղաքներ ու գավառներ,¹ հնարավորություն ունեին ավելի հանգամանորեն ու ազատ կերպով քննարկել հայ իրականությանը զբաղեցնող խնդիրները:

Այդ ժողովներում է, որ դեմ դեմ էին կանգնած հայ ժողովրդի երկու հակամարտ դասակարգերի ներկայացուցիչները, հայ բուրժուազիայի ոեակցիոն թևին պատկանող, սուլթանին վաճառված դավաճան իֆեդիները՝ Մարսուդ Սիմոն բեյը, Հ. Նուրյանը մի կողմից, Ազգային ժողովի «ամենեն կարմիր ազատական երեսփոխան»,² Բաղեչի դեպուտատ Արփիար Արփիարյանը մյուս կողմից, որը իր ցասումի զազաթնակետին հասած, Ազգային ժողովի նիստերից մեկում ապուսկեց Նուրյան իֆեդիին, համարելով նրան ժողովրդի դավաճան: Գ. Զոհրապը խոսելով այս դեպքի մասին, գրում է, որ Արփիարյանի միջոցով հայ ժողովուրդն է որ ապստակեց Նուրյանին:

Դասագրքի այս հատվածի հաջորդ նախադասությունը հետևյալն է.

«Արևմտահայ ինտելիգենցիայի արմատական, հետևողական, դեմոկրատական թևի ներկայացուցիչներն էին Ս. Ոսկանը և Հարություն Սվաճյանը (1831—1874)»:³

Այս նախադասությունն էլ պարունակում է մի հիմնական սխալ: Հայտնի է, որ 60-ական թվականներին որպես դեմոկրատ հանդես եկող Ստեփան Ոսկանը հետզհետե թեքվեց դեպի լիբերալ բուրժուական զազափարախոսությունը և արդեն «Հառնի» հրատարակման շրջանում որոշակիորեն դրսևորեց իր լիբերալ հայացքները:

Ինչով է Ստեփան Ոսկանը «հետևողական դեմոկրատ»: Ըստ դասագրքի, այն բանով, որ Ոսկանը «48 թ. փետրվարյան ունուցիայի մասնակից էր, 1855—1856 թ. թ. Փարիզում հրատարակում էր «Արևելք», իսկ 1859 և 1864—65 թ. թ. «Արևմուտք» լրագրերը: Իր թերթերում Ոսկանը կատաղի պայքար ծավալեց կղերական ոեակցիայի դեմ, հանուն խղճի ա-

1 Մեզ տվյալ դեպքում չի զբաղեցնում այդ «Սահմանադրության» ընտրական սխտեմի միանգամայն հակաժողովրդական, միայն թաղաքային բուրժուազիայի շահերին ծառայող էությունը: 140 դեպուտատներից միայն 40-ն էր ընտրվում գավառի հայության կողմից:

2 Վ. Թեքեյանի արտահայտությունն է. տես «Հուլիս», 1908, № 484:

3 Գ. Գոհրապ — «Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ», Փարիզ, 1932 թ., էջ 29:

4 «Հայ գրականության պատմություն», Ե. գիրք, էջ 15:

զատութեան և ազգային վերածնութեան մասին Որ Ոսկաներ Փարիզում հրատարակել է «Արև-մուտք» և «Արևելք» թերթերը, այդ զեռ թիշ է դեմոկրատ դառնալու համար, իսկ թե այդ թերթերը պայքար են ծավալել կղերականութեան դեմ, հանուն խղճի ազատութեան և ազգային վերածնութեան, ապա պետք է ասել, որ այդպիսի պայքար մղում էին 60-ական թվականների լիբերալ գրեթե բոլոր հրատարակությունները: Այստեղ անհրաժեշտ էր ցույց տալ, թե Ոսկաներ 60-ական թվականներին իր հրատարակած պարբերականներում պայքարի ինչպիսի է և էր ընդունում, հայ ժողովրդի փրկութեան հարցն ինչպես էր ըմբռնում, ինչքանով էր նա արձագանքում նախնայանի գաղափարներին:

Դասագիրքը իր այս բնութագրումով ոչ միայն չի կարողացել որոշել Ստեփան Ոսկանի գրական և հասարակական դեմքը, այլ էլ ավելի ազավաղել է, անուղղակի կերպով հենց սկզբից նրան դարձնելով լիբերալ հայացքների տեր մի մարդ:

Այժմ տեսնենք թե ինչպես է ներկայացված Սվաճյանը:

«Ն. Սվաճյանը 1856—62 թ. թ. և հետագա տարիներին Պոլսում հրատարակվող «Մեղուն» երկշաբաթաթերթի խմբագիրն էր: Սվաճյանը և նրա համախոհները պայքարում էին Սահմանադրությունը դեմոկրատիայի շահերին ծառայեցնելու համար: Արդյոք Սվաճյանի և «Մեղուն» հիմնական արժանիքը ա՛յդ էր: Միայն դրանով էր «Մեղուն» դառնում ամբողջ արևմտահայ աշխատավոր մասսայի սիրելի թերթը: Որո՞նք էին «Մեղուն» գաղափարական հենակետերը, որն էր նրա քաղաքական ծրագիրը, ազգային ազատագրության ինչպիսի՞ ուղի էր առաջարկում: Այս հիմնական հարցերի կողքով անցնելով, խոսել միայն ազգային ժողովրդ դեմոկրատականացնելու մասին, նշանակում է չըմբռնել, չհասկանա՛լ «Մեղուն» ամբողջ քաղաքական կուրսը:

«Սվաճյանի «Մեղուն» էր, որ բարձրացրեց գավառների խնդիրը, արձագանքեց Զեյթունի ապստամբությանը:»

Դարձյալ անորոշ է. այդ ի՞նչ գավառի խնդրի մասին է, ինչ ընթացք և վախճան է ունեցել: Ոչինչ հայտնի չէ:

Դասագրքում 70—90-ական թվականների հայ գրականության ներածությանը հատկացված է 6 էջ: Հեղինակն է ընկ. Ս. Հարությունյանը:

Ներածության այս հատվածը թեև չունի

1 «Հայ գրականության պատմություն», Բ. գիրք, էջ 15:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

նախորդ բաժնի արտառոց սխալներն ու թերությունները, բայց դարձյալ հեռու է դասագրքի պահանջները բավարարելուց: Հեղինակը չի կարողացել ճիշտ բնութագրում տալ 80—90-ական թվականների հայ իրականության տիպական կողմերին:

Հստ հեղինակի՝ այդ թվականներին

«Հայ ժողովուրդը շարունակում էր մնալ ցարիզմի և սուլթանիզմի լծի տակ: Արևելյան Հայաստանում տիրում էր մտրակը: Արևմտյան Հայաստանում 60-ական թվականներին հռչակված այսպես կոչված Ազգային սահմանադրությունը սուլթանը դարձրել էր թղթի կտոր: Ֆեոդալական-բեկական կամայականությունները սահման չունեին»:

Արևելյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի քաղաքական պայմանների այս նույնացումը բոստ էություն բացառում է այն սարսափելի ծանր պայմանները, որի մեջ ապրում էին Թյուրքիայում ապրող հայերը: Եթե հայ ժողովրդի այդ երկու հատվածները նույնպիսի քաղաքական և տնտեսական պայմաններումն էին գտնվում, էլ ինչու ամբողջ արևմտահայության ակնարկը դարեր շարունակ, հատկապես 19-րդ դարի ամբողջ ընթացքում, հառել էր դեպի հյուսիս և հայ ժողովուրդն իր ազատությունը սպասում էր Ռուսաստանից: Միթե՞ դասագրքի հեղինակի համար անծանոթ է այն փաստը, որ արևմտահայերը մահու և կենաց պայքար են մղել, բանտարկվել են, հալածվել հանուն այն բանի, որ ազատագրվեն սուլթանական լծից և միանան «Մոսկոֆի հողին», հասնեն «Մոսկոֆի սինոր»:

19-րդ դարի կեսերից, մասնավորապես ռուս-թուրքական պատերազմից հետո ուժեղացող օրինակատարի պայքարում թյուրքահայ ամբողջ աշխատավորությունը և նրա իղձերը արտահայտող առաջադեմ մտավորականությունը իրեն դրսևորեց որպես ռուսասեր:

Խոսքը այսուեղ չի վերաբերում ցարական կառավարության ներքին, սոցիալական-քաղաքական պայմաններին, այլ ցարական գրավման տակ գտնվող հայ ժողովրդի ու սուլթանական Թյուրքիայում գտնվող հայության վիճակի տարբերությանը:

Առհասարակ հայ և ռուս ժողովուրդների դարավոր կապը, այդ կապի կոնկրետ արտահայտությունները 19-րդ դարի 2-րդ կեսում, դասագրքում շատ թույլ է արտահայտված, որը դժվարացնում է տվյալ շրջանի հայ գրականության ճիշտ ըմբռնումը:

Համիդյան բռնապետության մասին գրված մի քանի կցկտուր տողերով անհնար է քա-

1 «Հայ գրականության պատմություն», Բ. գիրք, էջ 152:

ցահայտել 80-ական թվականների արևմտահայ իրականության մեջ առաջ եկած մի ամբողջ գրական հոսանքի սոցիալ-քաղաքական դավանանքը, գաղափարական ուղղությունը 60—70-ական թվականներին Հակոբ Պարոնյանի կողմից ռեակցիոն գաղափարախոսության և ռոմանտիկական գրական ուղղության դեմ մղվող պայքարը 80-ական թվականների կեսերից նոր որակի ստանում։ Ա. Արփիարյանի գլխավորությամբ Գր. Ղուկասյան, Տիգ. Կամսարականը, Մելքոն Գյուլբաջյանը, հետագայում նաև Երվանդ Օտյանը ապահովում են ռեալիզմի վերջնական հաղթանակը։

Քուրժուական գրականագիտությունը փորձելով բոլոր արևմտահայ գրողներին անպայման կապել այս կամ այն ֆրանսիացի գրողի հետ, մեխանիկական նմանություններ տեսնելով նրանց ստեղծագործությունների մեջ, հաճախ նույնիսկ հենվելով այս կամ այն եվրոպացի գրողի անվան հիշատակության վրա, ամբողջ արևմտահայ գրականությունը ստորադասել է արևմտաեվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականությանը, անտեսելով հայ հեղինակների ինքնուրույնությունը, այն բարեբար ազդեցությունը, որ ունեցել է ռուսական գրականությանը նաև արևմտահայ գրականության վրա։

Դասագրքում պետք էր ցույց տալ, որ 80-ական թվականներին արևմտահայ գրողներին գրավում էր ռուսական գրականության խորը գաղափարականությունը։ Ռուսական առաջավոր գրականությունը արժարժում էր գերազանցապես սոցիալական ազատագրական հարցեր, քննության էր առնում ռուս ժողովրդի տնտեսական և քաղաքական կյանքը, պայքարի էր ոգեկոչում ցարական ինքնակալության և ամեն տեսակի բռնակալության դեմ, հարազատորեն արտացոլելով իրականությունը, ցույց էր տալիս ազատագրման ճիշտ ուղին։

Ահա թե ինչու արևմտահայ առաջավոր գրողները այնքան բարձր էին գնահատում Տուրգենևի, Տոլստոյի, Դոստոևսկու, Պուշկինի, Լեոնովի ստեղծագործությունները և թարգմանություններ էին կատարում նրանցից, հոգիվածներ էին տպագրում նրանց մասին։

Այս կարևոր փաստերն ահա բոլորովին անտեսված են դասագրքում։

Դասագրքի այս բաժնի հեղինակը 80-ական թվականներին հրատարակված բոլոր թերթերն ու ամսագրերը լցրել է մի կաթսայի մեջ ու ներկայացրել, առանց որևէ քաղաքական քննադատում տալու հիշյալ հրատարակություններից մեկն ու մեկի մասին։ Բերենք մի հատված նրա ներածությունից.

«1872 թվին Թիֆլիսում հիմնադրվեց

«Մշակ» թերթը 1876 թ. հրապարակ եկավ Աբդար Հովհաննիսյանի «Փորձ» ամսագիրը, ապա նաև «Արձագանք»։ Շարունակում էր հրատարակվել «Մեղու Հայաստանին»։ Հիմնադրվեցին Սպանդար Սպանդարյանի «Նոր դարը», Տիգրան Նաղարյանի «Աղբյուրը»։ 1889 թվին հիմնադրվեց «Մուրճ» ամսագիրը Ավետիք Արասխանյանի խմբագրությամբ։ Այս՝ Արևելյան Հայաստանում, Թյուրքահայաստանում խոշոր գեր են խաղում «Արևելք» և «Մասիս» պարբերականները։ Դեռ 1870 թվին հրապարակ էր եկել «Արևելյան մամուլ» ամսագիրը, հայտնի հրապարակախոս և գրող Մաթևոս Մամուրյանի խմբագրությամբ։ Կային նաև պարբերական այլ հրատարակություններ։»

Մեխանիկական, անկապ այս թվարկումից դասագիրքն օգտագործող աշակերտը որևէ կողմնորոշում չի կարող ունենալ։ Միթե անհրաժեշտ չէր գոնե քննադատել այս պարբերականներից գլխավորների քաղաքական ուղղությունը, ասել թե դրանք հասարակական ուր շերտերի գաղափարախոսությունն էին արտահայտում, ի՞նչ ուղղություն ունեին, հայ առաջադիմական գրողները հատկապես որ պարբերականների շուրջն էին համախմբված և այլն։

Այդ բոլորը վրիպել է հեղինակի ուշադրությունից, ավելին՝ նույնիսկ այսպիսի պարզ թվարկումների մեջ չի երևում հեղինակի պատասխանատվության զգացումը՝ պատմական փաստերի ու թվերի նկատմամբ։ Օրինակ՝ թվարկելով 80—90-ական թվականների այդքան պարբերականների անուններ, մոռացվել է շատ կարևոր մի թերթ՝ Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթը (1891—1896 թ. թ.), որը արևմտահայ իրականության մեջ ամենաժողովրդական, տարածված թերթն է եղել։ Սխալ է տրված «Արևելյան մամուլի» հրատարակության թիվը, Մամուրյանի ամսագիրը սկսել է լույս տեսնել ոչ թե 1870 թվից, այլ 1871 թվից և այլն։

19-րդ դարի երկրորդ կեսի հայ իրականության այսպիսի սխալ, միակողմանի, ոչ գիտական մեկնաբանությամբ, հասկանալի է, որ դասագրքի հեղինակները չէին կարող բացահայտել այդ ժամանակաշրջանում ստեղծագործող հեղինակների գրական և քաղաքական դեմքը, աշխարհայացքը, նվազագրքի հեղինակները կարծես այդպիսի նպատակ չեն էլ ունեցել։ Նրանց համար բոլոր հայ գրողները համատարած դեմոկրատներ են, ժողովրդական գրողներ, ժողովրդին նվիրված գործիչներ։ Չափազանց քիչ է խոսվում, գրեթե չի էլ խոսվում նրանց դասակարգային պատկանելության

և «Հայ գրականության պատմություն», Բ. Գիրք, էջ 154։

մասին, չի շոշափվում նրանց աշխարհայացքի սահմանափակվածությունը: Նախասովետական հայ անցյալը այդ հեղինակների միապաղաղ բնութագրումով դուրս է եկել միատարր խաղաղ:

Բավարար չափով նկատի չի առնվել մարքսիզմի այն գրույթը, թե «Մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր հասարակությունների պատմությունը եղել է դասակարգային պայքարի պատմություն»¹:

Ինչպես ներածությունների, այնպես էլ հեղինակների բնութագրումների մեջ դասակարգային պայքարը այնքան թույլ է արտահայտված, որ մարդ երբեմն մոռանում է, թե կարգում է սովետական մի դասագիրք, թե՝ նախասովետական շրջանի ասենք Վ. Փափազյանի և կամ է. Մանվելյանի կողմից ստորագրված մի հայ գրականության դասագիրք:

Նույն մակարդակի վրա են կանգնած ու բնութագրված որպես ժողովրդական գրողներ ու ազգային ազատագրական պայքարի հրահրողներ Ղևոնդ Ալքշանը, Գամառ Քաթիպան, Սմբատ Շահազիզը, Բաֆֆին, Գողոթյանը և ուրիշները:

Մենք հնարավորություն չունենք հեղինակների բնութագրումը բնութային առնելու այնպիսի մանրամասնությամբ, ինչպես այդ կատարեցինք ներածությունները քննարկելիս, բայց չենք կարող գեթ համոռոտ կերպով շխուսել մի քանի հեղինակների մասին:

Իսասագրքում Մ. Նալբանդյանը ներկայացված է միանգամայն անբավարար մեկնայանությամբ: Հեղինակին չի հաջողվել ռացահայտելու մանավանդ Նալբանդյանի քաղաքական գաղափարական դավանանքը:

Բավականաչափ ընդարձակորեն խոսելով Նալբանդյանի կենսագրության մասին, ընկ. Սարգսյանը աննշան տեղ է հատկացրել նրա հիմնական աշխատությունների քննահատմանը: Այս տեսակետից բնորոշ է այն հատվածը, որտեղ վերլուծման է ենթարկվում «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկը: Դասագրքի հեղինակը, որ Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» թարգմանական գործին հատուկ գլուխ է նվիրել ու ընդարձակորեն կանգ առել նրա վրա, «Երկրագործության» մասին խոսել է շատ թուուցիկ կերպով, այն էլ Նալբանդյանի կենսագրության առնչությամբ:

Կարևորն այստեղ այն չէ, թե քանի նախադասություն է նվիրված հիշյալ աշխատության: Իականն այն է, թե ինչպես է ներկայացված «Երկրագործությունը»:

¹ «Եկամտնիստական պարտիայի մանիֆեստը», Երեվան, 1948 թ., էջ 18:

Ո՞րն է Նալբանդյանի արժանիքն այս գործում:

Հստ դասագրքի հեղինակի՝ այն, որ նա և...ելնելով Եվրոպայում տիրող ճգնաժամից, աղքատության հարաճուն ծավալումից, առաջարկում է հասարակության վերափոխման ուտոպիական-սոցիալիստական իր նախագիծը, նախագիծ, ըստ որի հասարակության տնտեսական կյանքի հիմքը կազմում է երկրագործությունը»:

Նալբանդյանը տվել է «Բուրժուական քաղաքակրթության խոր և արմատական քննադատությունը», «մտքի մի անօրինակ թափով» մերկացրել «կապիտալիստական հզոր պետություններին»:

Նալբանդյանը ծաղրում է բուրժուական հայրենասիրությունը, վերլուծում ֆրանսիական բուրժուական ուղուցիայի հայտնի «ազատություն», հավասարություն և եղբայրություն» սկզբունքները, նա «դիմակազերծ է անում Անգլիային, որ քաղաքակրթություն տարածելու դիմակի տակ թունավորում է ափիոնով ամբողջ ժողովուրդները», նա խայտառակության սյունին է գամում ցարիզմը, որ «ազատության մարգարեններին պատասխանում է բանտով, կնուտով և արսորով»: Եվ վերջապես՝ «Նալբանդյանը համոզված է, որ Եվրոպայի սոցիալական և քաղաքական հակասությունները «կանոնա թե ուշ» պիտի լուծվեն ուղուցիայով՝ «սոսկալի փոթորիկներով», իսկ և՛ «ռուս գյուղացուն ազատություն չտրվի հողով հանդերձ, ապա նա «կացինով կվճռի գործը»:

Մենք՝ չմեղանչելու համար դասագրքի տեքստին, գրեթե արտագրեցինք «Երկրագործության» մասին գրված հատվածը: Հենթեբոցոյին զարմացնող առաջին միտքը այն կարող է լինել, թե «Եվրոպայի տնտեսական ճգնաժամի» վերլուծմամբ, «Եվրոպայի հզոր պետություններին սոցիալական-քաղաքական կյանքով մտահոգված Նալբանդյանն ի՞նչպես է պատահել, որ բոլորովին չի հետաքրքրվել իր ժողովրդով, այն ժողովրդով, որը տառապում էր ցարիզմի ու սուլթանիզմի կեղեքման տակ: Ուրեմն ի՞նչով է երկրագործությունը «ուղիղ ճանապարհ» նշել հայ ժողովրդին: Այս հիմնական հարցերի մասին դասագրքում չկա ոչ մի նախադասություն, ոչ մի բառ կամ տառ:

Պատահական «մոռացություն» արդյո՞ւնք է այս: Դժբախտաբար, ոչ: Դասագրքի հեղինակը տալիս է դրա պատասխանը: Նա մի նախադասություն անգամ ցիտատ չբերելով «Երկրագործությունից», մեջ է բերում Ֆոյերբախից որպես կպիգրաֆ Նալբանդյանի վերցրած հայտնի ցիտատը և շտապում եզրակացնել, որ «Երկ-

¹ Հայ գրականության պատմություն, Բ. գիրք, էջ 23:

րագործության հեղինակը այս նոր երկի մեջ
ածավալուն կերպով բացահայտում է իրեն իր-
րե գերմանացի մեծ փիլիսոփայի հետևորդը։

Կոմենտարները բոլորովին ավելորդ են։
Այստեղ չկա ոչ միայն ճայ իրականության
ծնունդ, նրանով մտածողված նախաճառներ,
այլ Ձերնիշխակու և Բելինսկու, առնաստիճակ
ոստ վարսունականների գաղափարական ազ-
դեցությունը կրող նախաճառներ։ Չերնիշևսկու
միայն անվան հիշատակությունը քիչ է։

Նախաճառների քաղաքական դեմքի այս աս-
տիճանը մահաճ աղավաղումը կարմիր թելով
անցնում է նրա գեղարվեստական գործերի
վերլուծմանը հատկացված էջերում։ Այստեղ էլ
ենկ. Սարգսյանին ամենից ավելի մտահոգել է
այդ գործերի արտաքին կողմը, «կատարումը»,
քան գաղափարական բովանդակությունը։

Այսպես է սկսում դասագրքի հեղինակը
Նախաճառների պոեզիային նվիրված հատվածը.
«Ընթերցողությունը,— ահա մարդու խորհուր-
դը,— ասում է Նախաճառներ։ Այս խորհուրդ
Նախաճառներ բնորոշում է ինքն իրեն։ Նախ-
աճառների «խորհուրդը» հայ ժողովրդի լուսա-
վորությունն է»։

Նախաճառների պոեզիայում առաջնությունը
հատկացնել լուսավորությանը, նշանակում է
չմոռոնել նրա ամբողջ ստեղծագործության
ոգին։ Պատահական չէ, որ դասագրքում բա-
վական ընդարձակ խոսվելով հանդերձ ասենք,
«Ազատության երգի» մասին (համենայն դեպս
կրկնապատիկ ավելի ընդարձակ, քան «Երկրա-
գործության» մասին), հեղինակը շատ ավելի
զրադվել է այդ բանաստեղծության արտաքին
կողմով, քան նրա քաղաքական բովանդակու-
թյամբ։

Ահա մի հատված «Ազատության երգի»
բնութագրումից.

«Մեծ չէ այս բանաստեղծությունն իր ծա-
վալով, բայց շատ հարուստ է հույզերով ու վեհ
գաղափարներով։ Դա մի ամբողջ կենսագրու-
թյուն է՝ սկսած ծննդից, վերջացած մահով։
Այդտեղ բանաստեղծը տալիս է բնականական
կյանքը, հերոսի ներքին մտատանջությունները։
Դա պայքար է, ապստամբություն, ռեզիստանս,
թշնամիների դավ, մահ հանուն ազատության»։

Ապա մեջ բերելով բանաստեղծությունից
մի ութնյակ, հեղինակը շարունակում է.

«Եթե այս ութնյակը համեմատվի ահեղ
շառաչով թափվող ջրվեժի հետ, ապա առաջին
չորս ութնյակը այդ թափվելուն նախորդող ջրե-
րի զուսպ, կենտրոնացած, հանգիստ, բայց
սրընթաց հոսանք է։ Նախաճառներն ազատու-
թյան անհողողող զինվորի կերպարը պատկե-

րում է հակադրությունների միջոցով։ Մանուկը
հակադրվում է առնականացած մարդուն։ Ահա
նա, նոր շունչ առած, որը պարզում է իր եր-
կու ձեռքը և իր անզոր թեքումը գրկում ազա-
տությունը։ Ահա նա, օրորացում, որ ամեն հիգ
է գործ դնում ազատելու իր ձեռքերը կապանք-
ներից։ Ահա և նա թոթովելիս. նրա բերնից
դուրս թռած առաջին բառը «ազատություն»
է... Բանաստեղծության վերջին ութնյակն ամ-
բողջովին թափ է, ոգորում, հերոսական մահ։»
և այլն։

Այս ավերածություններն ամենևին չի բա-
ցահայտում բանաստեղծության գաղափարա-
կան բովանդակությունը։

Հայ գրականության մեջ Ռաֆայել Պատ-
կանյանը հայտնի է իր մարտական նացիոնա-
լիզմով, ազգայնական ուժեղ քննադատ։ Այս բա-
նը նշվել է նույնիսկ նախասովետական գրա-
կանագիտության մեջ։ Թվում էր, թե Պատկա-
նյանի քաղաքական դեմքը, նրա աշխարհա-
յացքը շատ ավելի հեշտ էր բնութագրել սովե-
տական դասագրքում։ Այդպես չի կատարվել
սակայն։ Դասագրքի այս մասի հեղինակին բա-
վականաչափ դժվարացրել է Պատկանյա-
նի մարտական նացիոնալիզմը։ Ինչքան էլ որ
ենկ. Սարգսյանը փորձել է Պատկանյանին
դուրս բերել ժողովրդական գրող, հայրենա-
սեր բանաստեղծ, ոչ մի մեկնաբանություն
չտալ նրա հայրենասիրության բուրժուական,
նացիոնալիստական բովանդակությանը, այնու-
ամենայնիվ այդ չի հաջողվել ու նա հարկա-
դրված դիմել է ամբողջացուցիչ բացատրու-
թյունների։

Այսպես, խոսելով Նախաճառների և Պատ-
կանյանի գաղափարական տարակարծություն-
ների մասին, ենկ. Սարգսյանն այդ տարակար-
ծությունները փոխանակ նրանց աշխարհայաց-
քի տարբերությամբ բացատրելու, փորձում է
բացատրել այն բանով, որ իբր թե Պատկա-
նյանը չի մասնակցել առաջադեմ և հետադեմ
ուժերի միջև մղվող պայքարին, թե «Պատկա-
նյանը հեռու էր պահում իրեն այդ բախումնե-
րից», դրա համար էլ «չմասնակցեց պայքա-
րին»։ Այնպիսի մի գրողի, ինչպիսին էր Պատ-
կանյանը, որի մարտական, ազգայնական պոե-
զիան հայ բուրժուազիայի հանապազօրյա ա-
զոթքն էր դարձել և արտասանվում ու երգվում
էր Թիֆլիսից Պոլիս,— ներկայացնել քաղաքա-
կան պայքարից դուրս, նշանակում է հիմնովին
աղավաղել բանաստեղծի քաղաքական դեմքը։
Մյուս կողմից եթե իսկապես պայքարից հեռու
էր Պատկանյանը, ապա ի՞նչպես հասկանալ
դասագրքի հաջորդ պարբերության մեջ բեր-
ված այն հավաստիացումը, թե «նա ազգային

հոգիները երգում, ոգևորում, երգակներ ճոճում ու նուրբացնելով պարզում: Ավելի ճիշտ չէ՞ր լինի ասել, թե դասագրքի հեղինակը պարզապես անտեսել է Պատկանյանի նացիոնալիզմը, նրան ես պահել է «հայրենասեր» ընդհանուր շրջանակի մեջ: Ասենք այդպես էլ արված է դասագրքում: Նացիոնալիզմը ներկայացնելով իբրև «մարտական հայրենասիրություն», ընկեր Սարգսյանը գրում է. — «Հայրենասիրությունը Պատկանյանի մոտ բնորոշվում է առանձին՝ վերջին է նրանցավորված. մարտական խիստ շրջանում:

Սխալ է ներկայացված նաև Ղ. Ալիշանը: Ինչպես մի շարք գրողների, այնպես էլ Ղևոնդ Ալիշանի բնութագրման մեջ հեղինակը երբեք չի ցանկացել նկատի ունենալ պատմականության սկզբունքը և գրողի աշխարհայացքի տրամաբանական լվուցիան: Հայտնի է, որ Ղևոնդ Ալիշանը ապրել է քաղաքական գաղափարախոսական շափազանց բարդ մի լվուցիա, հակասություններով ու զիջողականներով լի: Նրա առաջին շրջանի «տեղագրություններում» ակնհայտնի կերպով միմյանց դիմ պայքարում են մի կողմից մոլեռանդ կաթոլիկը, պապական, գաղափարներով թունավորված «սափածապաշտ» ու միստիկ վանականը, մյուս կողմից դեռ հայրենիքից բերված ու խոր արմատներ ունեցող ժողովրդական կյանքի տպավորություններն ու պատկերները, որոնք արտահայտվել են Նահապետի երգերի շարքի մեջ:

Նրկրորդ շրջանում՝ 80—90-ական թվականներին, միանգամայն այլ է Ալիշանը. նրա մեջ արդեն թույլ են թե՛ առողջ ժողովրդայնությունը, 40—60-ական թվականների դեմոկրատական տարրերը և թե՛ կաթոլիկական վարդապետի մոլեռանդությունը: Այս շրջանի Ալիշանը արդեն հայ հոգևորական է, ճիշտ է, կաթոլիկական համոզմունքներով, բայց քաղաքական դավանանքի մեջ յուսավորական, շեշտված նացիոնալիզմով:

Ղ. Ալիշանը այս շրջանում ոչ միայն իր գաղափարախոսությամբ է, որ արձագանքել է հայ քաղաքական պարտիաների իդեոլոգիային, այլև իր հասարակական գործունեությամբ, նա հեռվից հրահրել, հորդորել է այդ պարտիաների արկածախնդրությունները:

Քվում էր, թե Ալիշանի այսքան բարդ ու հակասություններով լի գաղափարական լվուցիան պետք է արժանանար լուրջ և զգույշ դեհաուսման: Սակայն կատարվել է միանգամայն հակառակը: Ալիշանը ներկայացված է պարմանալի միակերպությամբ, նրա մասին գրող ընկերը (և Սարգսյան) հայտարարելով, որ «Ալիշանի բոլոր երկերը առհասարակ — դրական թե գիտական, տողորված են վառ

հայրենասիրությամբ», իր այս թեզի հիմնավորումը սկսում է, ինչքան էլ այդ տարօրինակ լինի, հենց «Բամփ որոտանից», այն համարելով Ալիշանի հայրենասիրական թնաթի ամենաուժեղ լարերից մեկը: Ավելին՝ հեղինակը այդ «Բամփ որոտանի» արհեստականորեն կապում է «Խալալական ժողովրդի ապստամբության» հետ՝ ավստրիացիների դեմ: Ապացույց՝ «Ազատության» նրա ծարավը, հաղթելու կամ մեղմելու նրա վճիռը, թնդանոթաձգության որոտը, փողփողող դրոշակները, այս ամենը իրենց ազդեցությունն են թողել Ալիշանի վրա և նա ստեղծել է իր «Բամփ որոտանը»²:

Հասկանալի է, որ Պատկանյանի աշխարհայացքի սահմանափակվածությունը որպես հայրենասիրություն ներկայացնող հեղինակը շատ ավելի համարձակ կարող էր լինել Սմբատ Շահազիզին բնութագրելիս: Այդպես էլ կատարված է: Շահազիզը, ըստ դասագրքի, նույնպիսի «յուսավորական դեմոկրատ» է, ինչպես Մ. Նալբանդյանը: Ավելին՝ որպես բանաստեղծ, ըստ հրկույթին, նա Նալբանդյանից էլ բարձր է կանգնած, քանի որ «Հյուսիսափայլի» բանաստեղծներից ամենանշանավորը Սմբատ Շահազիզն է: Իսկ որտեղից են գալիս Շահազիզի այդ «ազատական», «յուսավորական» գաղափարները, դրանք խառնված են հայ իրականության վրա, ունեն իրենց սոցիալ տնտեսական հողը: Դասագրքի հեղինակը խոսում է, իհարկե, «Ջեյթունի» ղեկավարի մասին, «Եվրոպայում», Ռուսաստանում և Հայաստանում տեղի ունեցած քաղաքական ղեկավարի մասին, հիշելով նաև ռուս գրականությունից Շահազիզի կրած ազդեցությունը, բայց վերջիվերջո որոշակի րևորոշումը մնում է այն, որ «Եվրոպական գրականության կլասիկները խոր ազդեցություն են թողել Շահազիզի վրա՝ կրթելով նրան ազատության ոգով»:

Իսկ ինչից է երևում, որ եվրոպական գրականության կլասիկներն են, որ «կրթել» են նրան ազատության ոգով, այն բանից երևի, որ Լևոնը իր հետ վերցրել է նաև եվրոպական հեղինակների՝ Հայնեի, Բայրոնի և ուրիշների դործերը:

«Հայրենասիր» ընդհանուր բնութագրումով է ներկայացված նաև Մկրտիչ Պեշիկթաշլյանը: Ոչ միայն իսպառ անտեսված է նրա պոեզիայի ազդեցական հրաշագր, այլ անհասարակ չի հրկում գրող Պեշիկթաշլյանին իր ամբողջության մեջ: Հեղինակը շատ ավելի խոսել է թատերական գործիչ Պեշիկթաշլյանի մասին, քան

¹ Հայ գրականության պատմություն, Բ. Գիրք, էջ 83:

² Նույն տեղում, էջ 84:

³ Նույն տեղում, էջ 88:

քանաստեղծ և գրամատուրգ Պեշիկթաշլյանի: Ի՞նչ խոսել է կցկտուր, անկապ, միմյանց հետ որևէ առնչություն չունեցող նախադասությունների մեխանիկական շարադրումով: Ահա մի քանի տող Պեշիկթաշլյանի կենսագրությունից.

«Պեշիկթաշլյանը նաև թատերական խոշոր աշխատող էր: Նա ակտիվ պայքար էր մղում կրոնական ոեակցիայի դեմ: Նա բուռն խանդավառությամբ արձագանքեց Զեյթունի 1862 թվի ապստամբությանը:

Սակայն իր անձնական կյանքում Պեշիկթաշլյանը բախումովոր չէր: Նրա մասնագիտական թոքախտը մի կողմից, անհաջող սերբ մյուս կողմից պատճառ դարձան նրա վաղաժամ մահվանը¹:

Մի շարք գրողներ դասագրքում շատ մակերեսային ձևով են ներկայացված, նրանց հիմնական արժանիքները թողած՝ այնպիսի երկրորդական խնդիրների մասին է խոսվում, որ դասագրքի էջերից այդ գրողներին ծանոթանալ ցանկացողը կարող է միայն զարմանալ, թե ինչու են նրանք տեղ գտել սովետական դասագրքում:

Այդպիսի միանգամայն աղճատված, իր դեմքը կորցրած ձևով է ներկայացված արեմտահայ ականավոր գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը:

Որո՞նք են Արփիարյանի արժանիքները, որոնց համար այժմ նա իրավամբ կարող էր տեղ գտնել սովետահայ գրականության պատմության մեջ. այն, ինչ որ մինչև այժմ բարձրացվել է ու թմբկահարվել բուրժուական պատմագրության կողմից, որպես ազգային ազատագրական պայքարի արձագանք (եկարմիր ժամուցս), թե՛ այն, ինչով որ նա ավելի ու ավելի է մոտեցել աշխատավոր ժողովրդի գաղափարախոսությանը, ոգեշնչել է նրան քաղաքական, դասակարգային պայքարի՝ ընդդեմ ոչ միայն օտար շահագործողների, այլև առհասարակ սեփականատիրական դասակարգի:

Արփիարյանը հանդիսանում է արեմտահայ իրականության մեջ այն եզակի դեմքերից մեկը, որը գեոևս 80-ական թվականների սկզբներից զլխավորելով մի խումբ երիտասարդ գրողների գրական, մտավորական շարժումը, պայքար է մղել գրական անկումային ուղղությունների, ոեակցիոն ումանտիզմի դեմ, այդ ուղղությունների հիմնական օջախները հանդիսացող արեմտանվորական, մասնավորապես ֆրանսիական գրականության դեմ և, առաջ է քաշել ոեալիզմի պահանջը, ուսական գրականությանը հետևելու անհրաժեշտությունը:

Նրա խմբագրած մի քանի թերթերում է.

1 Նույն տեղում, էջ 94:

որ («Արեւիք», «Մասիս», «Հայրենիք», «Նոր կյանք» և այլն), հիմնականում ձեռնարկել է արեմտահայ նոր արձակ գրականությունը՝ նովելային զուգընթաց նաև վեպը (եկարմաղետին աղջիկը, «Անհետացած սերունդ մը», «Մարտիկ աղա» և այլն):

Արփիարյանը մանր բուրժուական աշխարհայացքից աստիճանաբար ավելի ու ավելի է մոտեցել դեմոկրատական գաղափարախոսությանը և 900-ական թվականների սկզբների կրելով հանդերձ ազգայնական պարտիաների գաղափարական որոշ ազդեցությունը, որոնց արձագանքն է նրա եկարմիր ժամուցս գործը, 1905 թվականի ուսական առաջին տնտեսիայի օրերին հանգել է այն եզրակացության, որ հայ ժողովրդի պայքարը ապարդյուն կարող է լինել միայն ազգային շրջաններում և որ միայն այդ պայքարը դասակարգային աստիճանի բարձրացնելով է, որ հնարավոր է ազատագրել ճնշված ու տառապած հայ ժողովրդին:

Նրա դեմոկրատական այս գաղափարախոսության լավագույն արձագանքներն են «Մինչև երբ» և «Ոսկե ապարանջան» պատմվածքները, որոնք հանդիսանում են արեմտահայ դեմոկրատական արձակի ամենահաջողված նմուշները: Եթե «Մինչև երբ» պատմվածքի հերոսը հայ շահագործողի ձեռքին տառապող բանվորը բարձրացրած իր բունցքը արտահայտում է իր ցասումը տիրող կարգերի դեմ ու հարց տալիս թե մինչև երբ է այդպես շարունակվելու, ապա «Ոսկե ապարանջան» հերոսներից մեկը արդեն հանգում է այն մտքին, որ նույնիսկ ոսկե ապարանջան համարվող արհեստը այլևս կապիտալիստական հասարակարգում չի կարող փրկել բանվորին, և որ բանվորի արհեստավորի փրկությունը կապիտալիստական կարգերի տապալման մեջ է:

Մեր նշած այս արժանիքներից որն է հիշատակված դասագրքում, դժբախտաբար և ո՛չ մեկը: Այնտեղ մենք տեսնում ենք նույն այն Արփիարին, որը երկար տարիներ տեղ է գտել նաև նախասովետական շրջանի դասագրքերում, այսինքն եկարմիր ժամուցիս հեղինակ Արփիարյանին:

Մենք չխոսեցինք Արփիարյանի մասին գրված հատվածում տեղ գտած փաստական սխալներին, անհշտություններին, վրիպումներին մասին: Այդ տեսակետից քննադատության չի կարող դիմանալ դասագրքի այդ գլխի և ոչ մի նախադասություն:

Մենք չխոսեցինք նաև մի շարք այլ գրողների նվիրված գլուխների մասին, որոնք նույնպես պարունակում են սխալներ:

Բայց հարկ ենք համարում նշել, որ դասագիրքն ունի նաև այլ կարգի թերություններ:

Քաջակայում է լեզվի հստակությունը: Զկա շարադրման միասնական ոճ և սկզբունք, տարբեր էտապների դրոշներին մասին խոսվում է տարբեր ոճով ու ծավալով: Կան հեղինակներ, որոնց նույնիսկ ծնողների մասին է խոսվում, այնինչ ուրիշների կենսագրության ամենագլխավոր փաստերը չեն բերվում: Աշակերտը կարող է հանդիպել բազմաթիվ անունների, տեղանիքների, որոնց մասին ոչինչ չկա դասագրքում: Լեզվական, ոճական սխալները, որոնք միանգամայն անհամատեղելի են դպրոցական մի ձեռնարկի համար, նկատելի են գրեթե յուրաքանչյուր գլխում: Հապճեպ, անփույթ աշխատանքի կնիքը երևում է դասագրքի վրա:

Այս բոլորից բխում է միայն մեկ եզրակացություն՝ այն, որ իրոք «Հայ գրականության

պատմության» դասագրքի Դ. հատորը չի բավարարում սովետական դպրոցի պահանջները: Ուստի այդ հատորի զգալի մասը ոչ թե պետք է վերամշակվի, կամ վերախմբագրվի, այլ պետք է նորից գրվի, և գրվի մարքսիստական մեկնաբանությամբ, յուրաքանչյուր նախադասության, յուրաքանչյուր բառի համար պատասխանատվության զգացում ունենալով:

Միայն այդպիսի դասագրքի հրապարակումով Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը կարող է կենսագործել ՀԿ(Բ) Կենտկոմի որոշումը և բավարարել սովետական դպրոցի այս օրվա կենսական պահանջները մեր երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության նկատմամբ:

Փ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

